Երևան քաղաքի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արգիշտի փողոց 1

Դիմող՝ Մարգարյան Ապրես

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ իրազեկում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 18:00-ից մինչև 20:00-ն, Երևան քաղաքի Ազատության հրապարակում տեղի կունենա հանրային հավաք, որի նպատակն է բարձրաձայնել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության խնդիրը։

Հավաքի ընթացքում օգտագործվելու են դրոշներ, պաստառներ, բարձրախոսներ, էլեկտրասնուցման սարքեր։

Նախատեսվող մասնակիցների քանակը առնվազն 10,000 է, իսկ կարգադրիչների քանակը՝ 30-ն է։

Հուլիսի 12-ին՝ ժամը 20:00-ին, հավաքի մասնակիցները կանցկացնեն երթ երկու ուղղություններով.

1. Ազատության հրապարակ – Բաղրամյան պողոտա – Ազգային Ժողովի շենքի մոտ,
2. Ազատության հրապարակ – Ամիրյան փողոց – Հանրապետության հրապարակ։

Հուլիսի 12-ին՝ ժամը 21:00-ից մինչև 24:00-ն, հավաքի և երթի մասնակիցները նախատեսում են իրականացնել նստացույց Ազգային ժողովի և Կառավարության շենքերի մոտ։

Հաջորդ օրը՝ հուլիսի 13-ին, ժամը 00:00-ից մինչև 24:00-ն, հավաքի մասնակիցները գտնվելու են Հանրապետության հրապարակում։

Նախատեսվող մասնակիցների քանակը մոտ 5,000 է, իսկ կարգադրիչների քանակը՝ 30։

Կից ներկայացնում եմ անձնագրիս լուսապատճենը։

Հարգանքով՝
Ապրես Մարգարյան

08.07.2025թ.